Հակոբ Սողոմոնյան

ԹԼՓԱՏՎԱԾՆԵՐԸ

ԳԻՐՔ ԵՐԿՈՒՍԻ ՀԱՄԱՐ

Եռագրություն

Գիրք առաջին

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ

Երևան 2012

... Այնպես, ինչպես Շեքսպիրի դրամաներուն մեջ, օրինակ, Ցարն նույնքան մարդկային է, ինչքան Օթելլոն, և ինչպես որ Օթելլոն Օթելլո չէ և չի կրնա բլլալ առանց Ցարոյի, նույնպես էլ հայը հայ է, որովհետև ճակատագիրը անոր դեմ հաներ է թուրքը, մին ընելով նահատակ, մյուսը՝ նահատակող, և սակայն երկուքն ալ խաղալիքներ՝ իրենց ճակատագրի ձեռքը: Երկուքն ալ հավասարապես մարդեր են, որոնք իրենց վիճակված ձևով կատարպեն: Վեպին աշխարհը դժոխք մըն է, ուր մարդիկ կտանջվին: Հայը կփրկվի, սակայն, մեռնելով, իսկ թուրքը մեռնիլ ալ չի կրնար: Վեպին մեջ հայը և թուրքը մարդկային հոգու երկու բևեռներ են...

ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆ

«Մոռա լեռան հայերը Ֆրանց Վերֆելին վեպին մեջ»
Բուխարեստ, 1940

Ինչ ունես քսակում

Հիսուս Քրիստոս անցնում էր մի գյուղով: Հավաքվեց նրանից դժգոհ մարդկանց բազմություն, շրջապատեց նրան և սկսեց ծանակել ու հայհոյել: Իսկ Հիսուս կանգնել ու ժպտում էր: Մի մարդ, որ հետևում էր կատարվածին, մոտեցավ Հիսուսին և հարցրեց, թե ինչո՞ւ է նա այդպես վարվում: Եվ Հիսուս պատասխանեց. «Յուրաքանչյուրը տալիս է այն, ինչ ունի իր քսակում»:

Մամլո հաղորդագրություն

«Օրերս Երևանում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանությանը նվիրված գիտաժողով: Մասնակցում էին աշխարհահռչակ ցեղասպանագետներ, գիտնականներ, հասարակական ու պետական գործիչներ ողջ աշխարհից: Ներկա էին վերապրածներ: Գիտաժողովը հեռարձակվում էր միջազգային ու տեղական հեռուստաալիքներով, համացանցային օնլայն կապով, նկարահանվում որպես տարեգրություն: Մասնակիցները փաստեցին, որ 1915 թվականին Թուրքիայում տեղի է ունեցել մարդկության պատմության առաջին ցեղասպանությունը, որի ժամանակ սպանդի է ենթարկվել շուրջ մեկուկես միլիոն հայ, ընտրանից տեղահանվել և հայրենազրկվել է մի ողջ ժողովուրդ:

Գիտաժողովը միաձայն ընդունեց բանաձև, որով դատապարտում էր Հայոց ցեղասպանությունը և դիմում աշխարհի ժողովուրդներին ու պետություններին՝ կոչ անելով ճանաչել, դատապարտել Հայոց ցեղասպանությունը և միանալ գիտաժողովի հայտարարությանը:

Այստեղ հիշատակված չէր Թուրքիա պետությունը և թուրք ժողովուրդը:

Գիտաժողովը կազմակերպված էր բարձր մակարդակով: Գիտնականներից ու մասնագետներից բացի հանդես եկան նաև ցեղասպանությունից մազապուրծ հատուկենտ անձինք, ինչեցին ականատեսների վավերական վկայություններ, ցուցադրվեցին հազվագյուտ փաստաթղթեր ու լուսանկարներ:

Հ.Գ.

Եղավ նաև արտառոց միջադեպ:

Ոչ գիտական, անհավատալի ելույթ ունեցավ մի տարօրինակ անձնավորություն, որը, ինչպես պարզվեց, գրանցված չէր ոչ մասնակիցների, ոչ հրավիրյալների ցուցակում: Նա բոլորի վրա թողեց հոգեգարի տպավորություն: Նրա ելույթը ուշադրության չարժանացավ գիտաժողովի մասնակիցների կողմից և չարժանագրվեց: Բայց այն մեծ հետաքրքրություն առաջացրեց լրագրողական շրջանակներում: Թեև մեր թղթակիցը փորձեց հանդիպել տարօրինակ բանախոսին և հարցազրույց անցկացնել, տակայն նրան գտնել չհաջողվեց: Նույնիսկ գիտաժողովի կազմակերպիչները չկարողացան որևէ տեղեկություն հաղորդել նրա մասին: Անհայտ է, թե նա ինչպես է հայտնվել գիտաժողովում: Անհասկանալի է նաև, թե այդ ընթացքում ինչով էին զբաղված հատուկ ծառայության աշխատակիցները: Թեև պետք է ենթադրել, որ նրանք անմասն չեն խորհրդավոր հոետորի անհետացումից:

Չնայած այս միջադեպին, ինչպես ասվեց, գիտաժողովն անցավ բարձր մակարդակով, ինչը վկայություն է այն բանի, որ մարդկությունը և հայ ժողովուրդը պատրաստ են դիմագրավել ցանկացած մարտահրավերի և փորձության»:

Մոլորված սպան

Հատուկ ծառայության կապիտան Հովհաննես Մահտեսյանը զայրացած նայեց շուրջը՝ հայացքով փնտրելով այն անփույթ աշխատակցին, որի մեղքով տարօրինակ անձնավորությունը կարողացել էր ոչ միայն ներթափանցել նիստերի դահլիճ, այլև մոտենալ խոսափողին ու անարգել ելույթ ունենալ: Աշխատակիցներն իրենց տեղում էին: Կապիտան Մահտեսյանը զգաց, որ նրանց զգոն հայացքից ոչինչ չի վրիպում: Բայց, այնուամենայնիվ, վրիպել էր: Տեղում էին նաև գաղտնի գործակալները. մեկը՝ որպես լրագրող, շրջում էր նախասրահում հավաքված բազմության մեջ, երկրորդը՝ որպես հնչյունային ռեժիսոր, երբեմն հայտնվում էր բեմում, երկուսը՝ որպես մասնակից, տեղ էին գրավել դահլիճում, իսկ մյուսը, հավաքարարուհու կապույտ խալաթը հագին, հսկում էր համապատասխան վայրում:

Սակայն Մահտեսյանը նրանցից տեղեկություններ ստանալու վրա ժամանակ չվատնեց. դա հետո: Առաջին հերթին անհրաժեշտ էր հասնել անծանոթին, որը միջանցքով արագ-արագ գնում էր դեպի ելքը: Մահտեսյանը արագացրեց քայլերը: Անծանոթը կարծես զգաց վտանգն ու ուսի վրայով ետ նայեց: Նրա հայացքը նույնքան տարօրինակ էր, որքան ելույթն ու արտաքինը: Այնտեղ մոայլության աստիճան տխուր, հուսաբեկ վճռականություն կար և անկենդան սառնություն, որից Մահտեսյանը փշաքաղվեց և մի պահ նույնիսկ կարկամեց: Նրա մտքում առկայծեց մի բան, որ նույնքան անհեթեթ էր, որքան խորհրդավոր հոետորի հայտարարությունը. քիչ էր մնում մտածեր, որ անծանոթը թերևս հենց այն անձնավորությունն է, ում անվամբ ներկա-